ՌՈԲԵՐՏ ԴԱՎԹՅԱՆ, Չարենցը և արվեստը, «Ոսկան Երևանցի» հրատ., Երևան, 2005, 288 էջ:

Վերջերս ընթերցասեր հասարակության սեղանին դրվեց Ռոբերտ Դավթյանի բազմամյա ուսումնասիրությունների արգասիքը՝ «Չարենցը և արվեստը» գիրքը: Գրականագետի և արվեստագետի կարողությունների հմուտ զուգադրմամբ Ռ. Դավթյանը ընթերցողի առաջ բացահայտում է Չարենցի՝ գեղագիտական մտքի բարձունքներից արվեստի հարցերը վարպետորեն արժևորող բացառիկ կերպարը:

Գրքի մասին պատկերացում կարելի է կազմել երեք գլուխների խորագրերից. «Դրամատուրգիայի, թատերական արվեստի և կինոարվեստի խնդիրները Չարենցի գեղագիտական հայացքներում», «Չարենցը և երաժշտությունը», «Կերպարվեստի և ճարտարապետության հարցերը Չարենցի գրական ժառանգության մեջ»: Ներածական խոսքին հաջորդում են վերոհիշյալ երեք գլուխները, եզրակացությունը, ապա հավելվածը, որտեղ ամփոփված են երեսունից ավելի կարծիքներ: Ռ. Դավթյանն ընթերցողին ներկայացնում է թատրոնի, կինոյի, երաժշտության, կերպարվեստի, ճարտարապետության հետ Չարենցի ստեղծագործությունների առնչությունները և նրա ցուցաբերած ակտիվությունը հասարակական կյանքում, արվեստի վերոհիշյալ բնագավառներում: Հեղինակը էջ առ էջ Չարենցին կերպավորում է որպես մեծ գեղագետի, որը ոչ միայն թատերագիտական գիտելիքներ ուներ, այլև արվեստի սուր և նուրբ զգացողություն ունեցող մեծություն էր: Ռ. Դավթյանը բացահայտում է մեծ բանաստեղծի ապրած կյանքը, մանրամասնում նրա հետաքրքրությունները հայ թատրոնի նկատմամբ: Չարենցը իրականության մեջ տեսնում էր բարոյական անկման բացահայտ փաստեր, որոնց շտկմանը, համոզված էր, կարող էր նպաստել թատրոնը. նա թատրոնն անվանում էր ուսումնառության դպրոց, որտեղ հասարակությունը պետք է տեսնի, զգա ճշմարիտն ու արդարացին: Չարենցը մեծ թատերասեր էր, թատրոնի ճակատագրով ապրող անհատ, և Ռ. Դավթյանը նրան տալիս է դիպուկ որակավորում՝ թատրոնի շինարար (էջ 16):

Չարենցը քաջատեղյակ էր համաշխարհային արվեստին, կուտակել էր արվեստաբանական խոր գիտելիքներ, որոնք էլ հմտորեն արտացոլում էր իր ստեղծագործություններում: Բանաստեղծը չէր սահմանափակվում միայն գրական գործունեությամբ, այլ նպաստում էր նաև հայ մշակույթի մյուս ոլորտների և հատկապես թատրոնի զարգացմանը: Նա լուրջ քայլեր էր ձեռնարկում Հայաստանում պետական թատրոն հիմնելու ուղղությամբ, ինչը հաջողվում է 1921 թ.: Խիստ մտահոգված Հայաստանի թատերական գործերի կազմակերպմամբ՝ մեծ բանաստեղծը նույնիսկ դրամատուրգիային և թատրոնին վերաբերող հոդվածներով գրքեր, ամսագրեր, լրագրեր էր հավաքում և ուղարկում թատրոն: Ռ.Դավթյանն ինքնատիպ ոճով ընթերցողին է ներկայացնում թատերական աշխարհում Չարենցի ծավալած գործունեությունը: Բանաստեղծին հուզում էր հայ թատրոնի բարենորոգման խնդիրը: Օժտված լինելով թատերական արվեստը ճիշտ գնահատելու կարողությամբ՝ նա անհանգստանում էր դրամատուրգիայի և թատրոնի զարգացման համար: Նա կարծում էր, որ թատրոնն այն ժամանակ է թատրոն, երբ հիմնված է սեփական և հարուստ խաղացանկի վրա:

Նյութի համակողմանի իմացությամբ Ռ. Դավթյանն ընթերցողին է ներկայացնում բանաստեղծի՝ թատերական արվեստի բնագավառում ունեցած

հետաքրքրությունները, նրա ավանդը հայ թատրոնի ձևավորման ու զարգացման գործում, լուսաբանում է բեմարվեստին վերաբերող նրա հայացքները:

Հանճարեղ բանաստեղծը, յուրացնելով հազարամյա քաղաքակրթության նվաճումները, քննել ու գնահատել է արվեստի, դրամատուրգիայի գործերը: Նա ապրում էր թատրոնով, թատերական արվեստում նորը ստեղծելու մտահոգությամբ: Չարենցը կամենում էր թատերական արվեստը զարգացման նոր հունի մեջ դնել, որի համար անհրաժեշտ էր գրել դրամատիկական ստեղծագործություններ: «…Չարենցն իր մեջ «հայտնաբերում է» թատերագրին: Նա դավանում է մեյերխոլդյան թատերական նորարարությունը՝ կառուցողական ակտիվությունը համարելով ժամանակակից արվեստի հիմնական գույնը»,- գրում է Ռ. Դավթյանը (էջ 33): Այսպես ծնվում է «Կապկազ թամաշա» կատակերգությունը:

Չարենցի ստեղծագործության մեջ մեծ կշիռ ունեն ներբողներն ու ձոները, որոնց Ռ. Դավթյանն անդրադարձել է բծախնդրությամբ: Բանաստեղծը դրանք նվիրել է Խ. Աբովյանին, Վ. Տերյանին, Մ. Մեծարենցին, Հովհ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին, Ակ. Բակունցին, Ա. Պուշկինին և այլոց: Բանաստեղծը ներբողներ է նվիրել նաև երաժշտության, ճարտարապետության, կինոյի, թատրոնի՝ իր ժամանակի գործիչներին, որոնք ներշնչման աղբյուր են եղել իր համար: «Ե. Չարենցը, ներշնչվելով հայոց մեծերի կերպարներով ու խոսքերով, նրանց հետ դառնում է ժողովրդական լեգենդ…».- գրում է հեղինակը (էջ 96):

Ե. Չարենցը հայ հոգևոր մշակույթի գանձարանում ծանրակշիռ գործեր է թողել, որոնք ներշնչանքի աղբյուր են եղել և՛ երգահանների, և՛ երգիչների համար: Իսկ երգն ու երաժշտությունը նրա տարերքն էին, և հատկապես գուսանական արվեստը հոգեհարազատ էր նրան: Չարենցը գերված էր Շերամի, Ջիվանու, Սայաթ-Նովայի երգարվեստով, Կոմիտասը նրա համար պաշտամունք էր: Ընթերցողը զգում է այն մեծ սերը, որ Չարենցը տածում էր դեպի Կոմիտասը, և որը Չարենցի համար սրբություն ու հավատամք էր: Թվում է, Չարենցի մեծ հայրենասիրությունը արտահայտվում է Կոմիտասի նկատմամբ ունեցած խտացված սիրով:

«Չարենցի պոեզիայի տաղաչափական առանձնահատկությունները երաժշտական արվեստում» գլխում Ռ.Դավթյանը մանրակրկիտ վերլուծել է Չարենցի տաղաչափական արվեստի շատ գաղտնիքներ՝ տաղաչափական արվեստի զարգացման նոր դրսևորումները, հանգավորման արվեստը՝ ամենաբազմազան արտահայտություններով: Հեղինակը բերում է չարենցյան պոեզիայի և՛ դասական (թե՛ արևմտյան՝ սոնետ, բալլադ, էլեգիա, և թե՛ արևելյան՝ գազել, ռուբայաթ, բեյթ), և՛ նորագույն, և՛ միջնադարից եկող տեսակներից (խորհուրդներ, տաղեր) օրինակներ ու հանգում համոզիչ հետևությունների: Չարենցը ոչ միայն հարստացրել է մեր հանգարանը նոր ու նորագույն եղանակներով ու միջոցներով, այլև բացահայտել հանգավորման արվեստի՝ նախկինում չօգտագործված մի շարք հնարավորություններ: Եթե նախորդ բաժիններում հեղինակը Չարենցին բացահայտում է որպես գեղագետի, թատերագետի, բարենորոգչի, ապա տաղաչափական ասպարեզում՝ իսկական նորարարի: Չարենցի բազմաթիվ ստեղծագործություններ իրենց երաժշտականության, տաղաչափական արվեստի շնորհիվ դարձել են երգ, որոնց էլ Ռ. Դավթյանը անդրադարձել է արվեստագետի և հատկապես երաժշտագետի խորաթափանց հայացքով, նուրբ զգացողությամբ:

Չարենցը կատարելության էր ձգտում նաև կերպարվեստի և ճարտարապետության ասպարեզում: Նա ուներ նուրբ ճաշակ, գեղանկարչությունն ու ճարտարապետությունը զգալու, ըմբռնելու զարմանալի ընդունակություն, գեղեցիկ և մնայուն արվեստը գնահատելու մեծ կարողություն: Նա կամենում էր իր ազգային մշակույթը տեսնել բարձունքներում: Իր՝ արվեստագետին հատուկ

խստապահանջությամբ և հետևողականությամբ նպաստելով այդ գործին: Գրքի երրորդ գլխում հեղինակը մեր առջև բացում է նորանոր էջեր Չարենցի կյանքի,

գործունեության, նախասիրությունների, մտահոգությունների մասին, որոնցով ամբողջանում է մեծ բանաստեղծի կերպարը:

«Հավելված» բաժնում ամփոփված են մշակույթի տարբեր ոլորտների ճանաչված մարդկանց տեսակետները՝ Մ. Մկրյան, Լ. Սամվելյան, Տ. Մանսուրյան, Ա. Չարենց, Ժ. Քալանթարյան և այլք:

Այս հետաքրքրական, ուսումնասիրությամբ Ռ. Դավթյանը հիմք է դրել մի նոր՝ գրականության և արվեստի համադրման ուղղության, որն էլ բավական ուշագրավ է և ուսանելի: «Չարենցը և արվեստը» գիրքը գիտական լուրջ ներդրում է արվեստի պատմության և տեսության ասպարեզում: Ինչպես վկայում է Տիգրան Մանսուրյանը, «Նա գտել է պոեզիայի և երաժշտության միաձուլման իր ուրույն եղանակը: Երկու գեղեցիկ արվեստների համադրումից նա ձևավորել և ստացել է արվեստի նոր ճյուղ, որն ընդունելի պետք է լինի և՛ գրականության, և՛ արվեստի մարդկանց համար» (էջ 270):

Ռ. Դավթյանը գիտական ծանրակշիռ խոսքով, ինքնատիպ վերլուծությամբ արժևորել է մեծ բանաստեղծի՝ արվեստի բնագավառում թողած ավանդը, տվել նրա հանրագումար-գնահատականը, որը խտացնում է Չարենցի ստեղծագործական խառնվածքի լավագույն կողմերը: Ռ. Դավթյանի կատարած ուսումնասիրությունը լրացնում է գրականության և արվեստի նորանոր կապեր՝ հաստատելով գրակա-նության և արվեստի անքակտելիությունը:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա. Ս.